<Յունիբանկ> ԲԲԸ 2020թ. գործունեության վերաբերյալ Վարչության տարեկան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր, գործընկերներ, տիկնայք և պարոնայք,

Թույլ տվեք ներկայացնել Յունիբանկի 2020 թվականի գործունեության վերաբերյալ համառոտ հաշվետվությունը:

Հաշվետու տարում Բանկի գործունեության առանցքային ուղղությունն էր ֆինանսական դժվարություններին առընչված հաճախորդների աջակցման ուղղությամբ լուծումներ մշակելը: Կորոնավիրուսի համավարակը դարձավ լուրջ մարտահրավեր համաշխարհային տնտեսության բանկային համակարգի համար: Հայաստանի համար նախորդ տարին ծայրաստիճան ծանր էր ու դժվար նաև Արցախում ծավալված ռազմական գործողությունների պատճառով: Բանկերը բախվեցին խնդիրների, որոնք անհրաժեշտ էր լուծել ոչ թե փուլ առ փուլ, այլ զուգահեռ:

Բնակչության, տնտեսության և ֆինանսական հատվածի աջակցմանն ուղղված պետական ծրագրերը և Կենտրոնական բանկի միջոցառումները նպաստեցին ճգնաժամի բացասական հետևանքների սահմանափակմանը: Հետևելով հաճախորդամետ մոտեցման սկզբունքներին՝ Բանկը սեփական ծրագրերի շրջանակներում անհապաղ գործարկեց հակաճգնաժամային գործիքներ՝ տրամադրելով հաճախորդներին հնարավորություն օգտվել վարկային արձակուրդներից և պարտավորությունների վերակառուցումից: 4-րդ եռամսյակում Բանկի օրակարգի կարևորագույն հարցը ռազմական գործողությունների մասնակիցներին և վերջիններիս ընտանիքներին աջակցելն էր:

Երկրում տնտեսական և սպառողական ակտիվության վերականգմանը հետ մեկտեղ, ինչպես նաև ամրության կուտակված պաշարի շնորհիվ Յունիբանկը բարելավեց ֆինանսական կայունության ցուցանիշները և գրանցեց դրական դինամիկա առանցքային ռազմավարական ուղղություններով:

<u>Առանցքային իրադարձություններ</u>

- ✓ Բանկն ընդլայնել է իր ներկայության աշխարհագրությունը, բացել է մասնաճյուղեր Ապարանում և Սիսիանում, բացել է իր առաջին արտասահմանյան մասնաճյուղը Աստանա Միջազգային Ֆինանսական կենտրոնում (Ղազախստանի Հանրապետություն, ք. Նուր-Սուլթան), որը մասնագիտանալու է միջազգային հաշվարկների ոլորտում: Արտասահմանյան շուկա մուտք գործելը նշանակալից իրադարձություն է ոչ միայն Յունիբանկի, այլ նաև Հայաստանի ամբողջ բանկային համակարգի համար: Միևնույն ժամանակ մշտական աշխատանքներ էին տարվում բջջային հավելվածի հնարավորությունների ընդլայման ուղղությամբ՝ 2020թ-ին UniMobile օգտատերերի թիվը 2019թ. համեմատ աճել է կրկնակի:

- ✓ Յունիբանկը Հայաստանի բանկային պատմության մեջ առաջին անգամ իրականացրեց դոլարային պարտատոմսերի երկրորդային ցուցակում Մոսկովյան բորսայում, դրանով իսկ ընդլայնելով կապիտալի տեղական շուկայի զարգացման և ներդրումների ծավալների մեծացման հնարավորությունները: Արդի տեղեկատվության բացահայտմամբ Բանկը հանդես եկավ թափանցիկության նոր մակարդակով: Բանկը հաջողությամբ տեղաբաշխել է պարտատոմսերի 14 թողարկում ավելի քան 30 մլն ԱՄՆ դոլարի և 3 մլրդ ՀՀ դրամի:

- ✓ Հաշվարկային սպասարկման մասշտաբների մեծացման ռազմավարության շրջանակներում Յունիբանկը զգալիորեն ընդլայնել է թղթակցային ցանցը ԱՊՀ երկրների և արտասահմանյան

առաջատար բանկերի հետ՝ ապահովելով միջազգային հաշվարկների օպտիմալ ձևեր արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների համար:

- ✓ Յունիբանկը ներդրել է արհեստական բանականության տեխնոլոգիան անգրավ սպառողական վարկերի սքորինգային համակարգում: Նորարարական ալգորիթմը թույլ է տալիս զգալիորեն խնայել միջոցները, մշակել մեծ ծավալով տեղեկատվություն, վերլուծել և կառուցել հաճախորդի պրոֆիլը, դրանով իսկ նպաստելով զանգվածային վարկավորման աճին:

- ✓ Visa միջազգային վճարային համակարգը շնորհել է Յունիբանկին «Sustainability Icon» մրցանակը՝ բարձր գնահատելով հաջող համագործակցության արդյունքները:

- ✓ Յունիբանկը դարձել է Raiffeisen Bank International ավստրիական բանկի «STP Quality Award 2020» մրցանակակիր՝ միջազգային վճարային գործարքների բարձր որակ և մշակման արագություն ապահովելու համար: Յունիբանկի հաճախորդները ապահովել են SWIFT փոխանցումների տպավորիչ աճ 68%-ով:

- ✓ 2020թ. հուլիսին Moody's Investors Service միջազգային վարկանշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկանիշը B2 մակարդակում՝ կայուն հեռանկարով:

- ✓ Ըստ <ԱՐՔԱ> գործակալության, Յունիբանկը համալրել է Հայաստանի առևտրային բանկերի տասնյակը 31.12.2020թ. դրությամբ 156.8 մլրդ դրամի վարկային պորտֆելի մեծությամբ:

- ✓ PCI DSS և ISO 27001:2013 միջազգային ստանդարտների պահանջների համապատասխանության վերահավաստագրումը վկայում է Բանկի տեղեկատվական ռեսուրսների պաշտպանվածության բարձր մակարդակի մասին:

<u>Համառոտ ֆինանսական ցուցանիշների մասին</u>

Համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների՝ Բանկը 2020 թվականն ամփոփել է հետևյալ ցուցանիշներով՝

- ✓ **ԱԿՏԻՎՆԵՐԸ** կազմել են 238.2 մլրդ դրամ:
- ✓ **ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ** կազմել են 156.6 մլրդ դրամ, կամ ընդհանուր ակտիվների 65.7%-ը: Դրամային վարկային պորտֆելը կազմել է ընդհանուր վարկային պորտֆելի 51.6%-ը: Վարկավորման միջին տարեկան տոկոսադրույքը կազմել է 9.4%: 2020թ-ին Յունիբանկի վարկային պորտֆելն աճել է 15.2 մլրդ դրամով, կամ 10.7%-ով:
- ✓ **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ** ծավալը կազմել է 204.3 մլրդ դրամ:
- ✓ **ԱՎԱՆԴՆԵՐԻ** պորտֆելը կազմել է 156.8 մլրդ դրամ:
  Թողարկված պարտատոմսերի պորտֆելը հասել է 9.5 մլրդ դրամի:
- ✓ **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են 10.1 մլրդ դրամ, զուտ տոկոսային մարժան կազմել է տարեկան 4.2%, ինչը 0.6 տոկոսային կետով ցածր է 2019թ. ցուցանիշից: Նվազումը պայմանավորված է Արցախում ծավալված ռազմական գործողությունների հետևանքներով և երկրի տնտեսության վրա բացասական ազդեցությամբ:
- ✓ **ՈՉ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են 4.6 մլրդ դրամ:
- ✓ **ԶՈՒՏ ԿՈՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են 2.2 մլրդ դրամ՝ ավելանալով 26%-ով:
- ✓ **ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԸ** կազմել է 14.7 մլրդ դրամ:
- ✓ **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ** կազմել է 33.9 մլրդ դրամ: Տարեվերջի դրությամբ կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 13.41%, ինչը գերազանցում է ՀՀ Կենտրոնական բանկի սահմանած նվազագույն մակարդակը (12%):
- ✓ **ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԸ** կազմել է 238.6 մլն դրամ:

Կորպորատիվ բիզնես

Միկրո, փոքր և միջին բիզնեսի սեգմենտի ֆինանսավորումը շարունակել է մնալ Յունիբանկի վարկային քաղաքականության գերակա ուղղությունը: 2020թ. ընթացքում բիզնես վարկերի պորտֆելը աճել է 6%-ով և կազմել է 67 մլրդ ՀՀ դրամ: Ընդհանուր վարկային պորտֆելում կորպորատիվ վարկերի ծավալը կազմել է 44%, ընդ որում խոշոր վարկերը՝ 61%, ՓՄՁ վարկերը՝ 39%: Բանկը առաջնորդվում էր ՓՄՁ վարկավորման ճկուն մոդելով, որպես համավարակի պայմաններում տնտեսության առավել խոցելի ճյուղերից մեկի, և ակտիվ մասնակցում էր բիզնեսի պետական աջակցման ծրագրերում գրեթե 1 մլրդ դրամ ֆինանսավորման ծավալով, 9 մլրդ դրամ ընդհանուր գումարի վարկերի վերակառուցմամբ:

Բանկը հետևում է համավարակից առանձնակի տուժած զբոսաշրջության ոլորտի վերականգնման դինամիկային և մշակում է նպատակային ֆինանսավորման ծրագիր:

Տարվա ընթացքում Բանկը շարունակել է աշխատանքը նաև միջազգային ֆինանսավորման ծրագրերով՝ KfW Գերմանական զարգացման բանկի հետ՝ արևային էլեկտրակայանների ձեռքբերման, FMO Հոլանդական զարգացման բանկի հետ՝ Հայաստանում կանանց ձեռնարկատիրության աջակցման: Յունիբանկը աշխարհի երեք բանկերից մեկն է, որոնք ընտրվել են FMO-ի կողմից սույն ծրագիրն իրականացնելու նպատակով: Բանկը հաջողությամբ անցել է <Գյուղատնտեսության ոլորտի ՓՄՁ ֆինանսավորում> KfW ծրագրին մասնակցելու նախնական ընտրության գործընթացը:

Իրավաբանական անձանց ժամկետային ավանդների պորտֆելը կազմել է 17.8 մլրդ դրամ՝ արձանագրելով աճ 5.8 մլրդ դրամի չափով: Ցպահանջ միջոցների պորտֆելը նվազել է 37.1 մլրդ դրամով և կազմել 31.6 մլրդ դրամ:

Մանրածախ բիզնես

Յունիբանկը տեղական մանրածախ վարկավորման շուկայում առաջատար դերակատարներից մեկն է, հաճախորդների բազան ընդգրկում է Հայաստանի աշխատունակ բնակչության մոտ 1/3-ը: 2020 թվականին Յունիբանկը ֆիզիկական անձանց տրամադրել է 70 մլրդ դրամի վարկեր, տարեվերջին պորտֆելը գերազանցել է 85 մլրդ դրամը՝ տարվա ընթացքում աճելով 10 մլրդ դրամով, կամ 13%-ով: Սպառողական վարկավորման ծավալն ապահովվել է այդ թվում նաև հարմար գործիքակազմի մշակման և մի շարք գործընթացների ավտոմատացման շնորհիվ:
2020 թվականի արդյունքներով Յունիբանկն առաջատար դարձավ տրամադրած ապառիկ վարկերի քանակով: Ապառիկ վարկավորման ոլորտում Բանկին բաժին է ընկնում շուկայի ընդհանուր ծավալի մոտ 20%-ը:

Բջջային հավելվածի գործունակության ընդլայնման շրջանակներում մշակվում է մանր անգրավ վարկերի ստացման հայտի ձևակերպումը:

Սոցիալ-տնտեսական ճգնաժամի արդյունքում սպառողական վարկերի գծով պահուստին հատկացումները կազմել են ավելի քան 1 մլրդ դրամ, ինչը գրեթե երկու անգամ գերազանցում է 2019թ. ցուցանիշը: Ըստ վինտաժային վերլուծության, այս տարվա մարտ ամսից վարկառուների վճարային կարգապահության բարելավում է նկատվում:

Ֆիզիկական անձանց ժամկետային ավանդների պորտֆելը տարեսկզբից նվազել է 8.3 մլրդ դրամով, կամ 8.6%-ով: Ցպահանջ ավանդներն աճել են 6.7 մլրդ դրամով: Բանկի թողարկած պարտատոմսերի պորտֆելի կառուցվածքում տեսակարար կշռի 79%-ը բաժին է ընկնում ֆիզիկական անձանց պարտատոմսերին, ինչը վկայում է բնակչության բարձր վստահության և երկարաժամկետ ներդրումային գործիքում սեփական խնայողությունները ներդնելու պատրաստակամության մասին:

Կորպորատիվ կառավարում

Բանկի ներդրումային գրավչությունը և գործունեության թափանցիկությունը բարձրացնելու նպատակով հետևողական աշխատանքներ են տարվում՝ բարելավելու կորպորատիվ կառավարման պրակտիկան:
Բանկի կառավարման մարմիններին կից ստեղծված են և ակտիվ գործում են. **Խորհրդին կից**՝ Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողովը, Ներդրումային հանձնաժողովը, Պարգևատրումների հանձնաժողովը, **Վարչությանը կից**՝ Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողովը, Սակագնային հանձնաժողովը, Անձնակազմի գնահատման հանձնաժողովը, Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողովը, Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողովը:

Արդյունավետորեն գործում են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովը, Վարկային կոմիտեն, Տենդերային հանձնաժողովը, Վարկային սքորինգի հանձնաժողովը:

Կադրային քաղաքականություն

Բանկի կադրային քաղաքականությունը 2020թ-ին ուղղված էր առավելապես կազմակերպական կառուցվածքի ռացիոնալացմանն ու օպտիմալացմանը, մասնավորապես՝ հաստատվել է մասնաճյուղային ցանցի բիզնես մոդելի նոր հայեցակարգը: Մասնակի անցում կատարելով աշխատանքի հեռավար ռեժիմի՝ կադրային միջոցառումներն ուղղված են եղել անվտանք աշխատանքային պայմանների ապահովման, հեռավար աշխատանքի մշակույթի զարգացման վրա:
31.12.2020թ. դրությամբ աշխատողների թիվը կազմել է 792 մարդ:

ՀՀ ԿԲ պահանջներին համապատասխանությունը

ՀՀ Կենտրոնական բանկի կողմից արձանագրված, ինչպես նաև հաշվետու տարում Համապատասխանության դեպարտամենտի կողմից մոնիթորինգի արդյունքում հայտնաբերված խախտումները և անհամապատասխանությունները վերացնելու և հետագայում դրանք բացառելու նպատակով՝ ըստ սահմանված ժամանակացույցի իրականացվել են համապատասխան միջոցառումներ:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից վարչական տույժ է սահմանել Բանկի Վարչության նախագահի նկատմամբ՝ 2019թ. նոյեմբերին Հայաստանի Հանրապետության պետական սահմանով փոխադրված ապրանքների վիճակագրական ձևաթղթերը ոչ ժամանակին ներկայացնելու համար:

ՀՀ Կենտրոնական բանկի նախագահի որոշմամբ Յունիբանկի նկատմամբ կիրառվել է վարչական պատասխանատվության միջոց՝ նախազգուշացման տեսքով՝ 2020թ. սեպտեմբերին թվով 94.711 վարկերի մասով փոփոխությունները Կենտրոնական բանկի վարկային ռեգիստր սահմանված ժամկետում չտրամադրելու համար:

Համապատասխանության դեպարտամենտը մեծ ուշադրություն է դարձնում նաև Բանկի ներքին իրավական ակտերի՝ Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և Բանկի ընթացիկ բիզնես գործընթացներին համապատասխանությունը ապահովելուն, ինչի մասին վկայում է այն փաստը, որ 2020թ-ին նոր խմբագրությամբ հաստատվել է թվով 22 նորմատիվ ակտ:

2020թ-ի ընթացքում աշխատակիցների համար իրականացվել են իրազեկման արշավներ սանիտարահամաճարակային կանոնների պահպանման վերաբերյալ:

2021թ. ռազմավարական առաջնահերթությունները

2020թ. համավարակը և ռազմական գործողությունները ստիպեցին վերանայել Բանկի ռազմավարական նպատակները, ճշգրտել խնդիրները և զարգացման գերակայությունները: Ներկայումս ֆինանսական տեխնոլոգիաները ֆինանսական ծառայությունների բաղկացուցիչ մասն են, և Բանկը, շուկայի միտումներին զուգահեռ, ակտիվորեն ներդնում է fintech-ի նորույթները: Նախանշվել են հետևյալ հիմնական վեկտորները՝ ուղղված նոր իրականությանը հարմարվելուն՝

- տեխնոլոգիական զարգացման արագացում, այդ թվում հաճախորդների սպասարկման թվայնացում, մարքեթփլեյսի ստեղծում, վարկավորման գործընթացում արհեստական ինտելեկտի կիրառման ընդլայնում, P2P փոխանցումների և վարկավորման գործարկում, բանկոմատային ցանցի անհպում տեխնոլոգիայով զինում,
- թվային վերափոխման պայմաններում ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործում,
- Բանկի ծառայությունների աշխարհագրության ընդլայում, այդ թվում այլ երկրներում,
- <Կանաչ ֆինանսավորում> նախագծին մասնակցություն,
- Բանկի ներդրումային պորտֆելի ընդլայնում, կանոնադրական կապիտալի ավելացում,
- Բանկի ներքին արդյունավետության և արտաքին մրցունակության բարձրացում:

Այս տարի Յունիբանկը նշում է իր 20-ամյակը՝ համատեղ հաջողության տարեդարձը: Ես կցանկանայի առանձին շնորհակալություն հայտնել Յունիբանկի հիմնադիրներ Գագիկ Զաքարյանին և Գեորգի Պիսկովին, որոնց հետ միասին Բանկն անցել է երկար ճանապարհ, որը հնարավորություն տվեց դառնալ դինամիկ զարգացող ունիվերսալ բանկ: Շնորհավորում եմ բոլորիս և մաղթում նորանոր հաղթանակներ:

Ամփոփելով՝ կցանկանայի Յունիբանկի Վարչության անունից խորին շնորհակալություն հայտնել բոլոր հաճախորդներին և գործընկերներին վստահության և հավատարմության համար, բոլոր բաժնետերերին՝ աջակցության և ընդհանուր գործում ներդրում ունենալու համար, Յունիբանկի ողջ թիմին՝ աշխատանքի և նվիրվածության համար, որ օգնեցին հաղթահարել անցած տարվա այդքան դժվարին պայմանները:

Մեսրոպ Հակոբյան

Վարչության նախագահ

31.05.2021թ.